ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.09.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/245

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.08.2021թ. թիվ 26/26-1/13701-2021 գրությամբ «Արիմա գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 20.08.2021թ. թիվ ՊՆ//4354-2021 գրության հիման վրա, 26.08.2021թ. թիվ 26/26-1/13701-2021 գրությամբ նախաձեռնել է «Արիմա գրուպ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Արիմա գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը</u>.

«Արիմա գրուպ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Արիմա գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/245 ընթացակարգի շրջանակներում 01.09.2021թ. ժամը 09:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը</u>.

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 20.08.2021թ. թիվ ՊՆ//4354-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Արիմա գրուպ» ՍՊ ընկերության միջև 02.06.2021թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-21-3/2-2 գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. օգոստոսի 18-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է N ԳՀԱՊՁԲ-21-3/2-2 գնման պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 18.08.2021թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար կից ներկայացվում են վերոնշյալ մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/245 ընթացակարգի շրջանակներում 01.09.2021թ. ժամը 09:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/245 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/245 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Արիմա գրուպ» ՍՊԸ-ի միջև 02.06.2021թ. կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-21-3/2-2» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել 2021 թվականի 2-րդ եռամսյակը:

3. ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության ԹԱ վարչության պետի կողմից ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետին 13.08.2021թ. ներկայացվել է զեկուցագիր հետևյալ բովանդակությամբ.

«Զեկուցում եմ, որ ՀՀ ԶՈՒ ԲՀԱ վարչությունը 05.08.2021թ. է/փ ելք 1448 գրությամբ առաջարկվել է ՀՀ ՊՆ և «Արիմա գրուպ» ՍՊԸ-ի միջև կնքված ԳՀԱՊՁԲ-21-3/2-2 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծել՝ հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7.1 կետի բ ենթակետի պահանջը, այն է՝ խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը:

Հաշվի առնելով վերը նշվածը առաջարկում եմ հանձնարարել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչությանը՝ «Արիմա գրուպ» ՍՊԸ-ի հետ կնքված ԳՀԱՊՁԲ-21-3/2-2 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծել:

Կից ներկայացնում եմ նաև ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության վճարահաշվարկային գործառնությունների վարչության կողմից տրամադրված հաշվարկները»:

4. Պատվիրատուն «Արիմա գրուպ» ՍՊԸ-ին ուղղված 18.08.2021թ. թիվ ՆՏԱ/2786 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «Արիմա գրուպ» ՍՊԸ-ի միջև 02.06.2021թ. կնքված թիվ ԳՀԱՊՁԲ-21-3/2-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը 2021թ. 2-րդ եռամսյակի ընթացքում պետք է մատակարարեր 3 անվանում ապրանքատեսակ՝ ՀՀ զինանշան (ՀՀ ԶՈՒ զինանշան),

Դրոշակակրող (Դրոշի ձող՝ տակդիրով) և Դրոշներ (ՀՀ պետական դրոշ) ապրանքատեսակները, որոնք չեն մատակարարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. օգոստոսի 18-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է վերոնշյալ Պայմանագիրը: (...)»:

5. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 18.08.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 26.08.2021թ. թիվ 26/26-1/13701-2021 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 20.08.2021թ. թիվ ՊՆ//4354-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության և «Արիմա գրուպ» ՍՊԸ-ի միջև 02.06.2021թ. կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-21-3/2-2» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել 2021 թվականի 2-րդ եռամսյակը:

ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության ԹԱ վարչության պետի կողմից ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետին 13.08.2021թ. ներկայացվել է զեկուցագիր հետևյալ բովանդակությամբ.

«Զեկուցում եմ, որ ՀՀ ԶՈՒ ԲՀԱ վարչությունը 05.08.2021թ. է/փ ելք 1448 գրությամբ առաջարկվել է ՀՀ ՊՆ և «Արիմա գրուպ» ՍՊԸ-ի միջև կնքված ԳՀԱՊՁԲ-21-3/2-2

ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծել՝ հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7.1 կետի բ ենթակետի պահանջը, այն է՝ խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը:

Հաշվի առնելով վերը նշվածը առաջարկում եմ հանձնարարել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչությանը՝ «Արիմա գրուպ» ՍՊԸ-ի հետ կնքված ԳՀԱՊՁԲ-21-3/2-2 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծել:

Կից ներկայացնում եմ նաև ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության վճարահաշվարկային գործառնությունների վարչության կողմից տրամադրված հաշվարկները»:

Պատվիրատուն «Արիմա գրուպ» ՍՊԸ-ին ուղղված 18.08.2021թ. թիվ ՆՏԱ/2786 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և «Արիմա գրուպ» ՍՊԸ-ի միջև 02.06.2021թ. կնքված թիվ ԳՀԱՊՁԲ-21-3/2-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը 2021թ. 2-րդ եռամսյակի ընթացքում պետք է մատակարարեր 3 անվանում ապրանքատեսակ՝ ՀՀ զինանշան (ՀՀ ԶՈՒ զինանշան), Դրոշակաձող (Դրոշի ձող՝ տակդիրով) և Դրոշներ (ՀՀ պետական դրոշ) ապրանքատեսակները, որոնք չեն մատակարարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. օգոստոսի 18-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է վերոնշյալ Պայմանագիրը: (...)»:

<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 18.08.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:</u>

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

Պայմանագրի 6.6-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այսպիսով՝ վերը շարադրվածի հաշվառմամբ արձանագրում եմ, որ «Արիմա Գրուպ» ՍՊԸ-ն խախտել է իր և ՀՀ պաշտպանության նախարարության միջև 02.06.2021թ. կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-21-3/2-2» պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Արիմա Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.08.2021թ. թիվ 26/26-1/13701-2021 գրությամբ «Արիմա Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Արիմա Գրուպ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**